ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆԻ
ԽՈՀԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Է. Ս.

Սփյուռքահայ բանաստեղծ, արձակագիր, թատերագիր, քննադատ, հրապարակախոս և մանկավարժ Մուշեղ Իշխանը (Ճենտերեճյան) ճակատագրի բերումով եղավ հայոց սփյուռքի գոյության վկան ու տարեգիրը, բանաստեղծն ու հայապահպանության նվիրյալ զինվորը: Ի սկզբանե նրա քնարերգությունն օժտված էր խոհական տարերքով, փիլիսոփայական հարցադրումների լայն և խոր ընդգրկմամբ: Լինելով հայոց սփյուռքի ու նրա մշակույթի ձևավորման ակունքներում՝ արևմտահայ գրականության ժառանգորդը՝ Մուշեղ Իշխանը, իր սերնդակից մտավորականների, գրողների ու արվեստագետների հետ, բնականաբար, պիտի արժևորեր նոր գոյավիճակը, բացահայտեր ազգային ինքնության պահպանման ուղիները, իր համար հստակեցներ սփյուռքահայության արժեհամակարգն ու ձևավորեր իր սերնդի սփյուռքահայի աշխարհայացքը: Քաղաքական հստակ դիրքորոշումը (նա ՀՅԴ անդամ էր), գաղափարական և գեղագիտական խնդիրների ընդգրկումն արդեն նախանշում են «սրբազան ժառանգ» բանաստեղծի ուղին. ճանաչել և յուրացնել ազգային արժեքները, արևմտահայ բանաստեղծության ավանդները և ստեղծագործաբար զարգացնել դրանք հայի նոր տեսակի՝ Մերձավոր Արևելքում հանգրվանած «արեւելքի որբ տղու» աշխարհընկալմամբ ու զգայություններով: Հայկական հյուղավաններում հասակ առնող տղաների գենետիկ կոդում ամրագրվել էր Հայոց ցեղասպանություն հասկացությունը՝ հայերեն ու թուրքերեն նիշերով. «կոտորած», «նախճիր»,«զուլում», «սեվքիաթ» (տեղահանում), «սեֆերպերլիք» (զորակոչ): Մուշեղ Իշխանը հայի այն տեսակն էր, որի գոյությունը պիտի կրեր նահատակների ապրած ցավն ու անկատար երազները.

Իմ երգս երգ չէ, այլ ճիչ մը ցավի,
Որ միշտ կարիւնի
Կուրծքիս տակ թաքուն,
Երբ դեմքիս վրա ժպիտ կա ծաղկուն,
Իմ երթս երթ չէ, այլ նահանջ բյուրոց
Եվ սուգ մեռելոց.
Իմ ճամփուս վրա մեռած երազի արցունք կտեղա[1]:

20-30-ական թվականներին սփյուռքահայ գրականությունն իր ձևավորման փուլում, նոր կենսապայմաններում փորձեց վերաիմաստավորել կյանքի ու գրականության, ազգայինի ու համամարդկայինի, ձևի և բովանդակության հիմնախնդիրները, ինչպես նաև ասպընջական երկրի մշակույթի, ժողովրդի հետ իրենց փոխհարաբե-

[1] **Մ. Իշխան,** *Արեւամար, Պեյրութ, 1986, էջ 27:*

ության, լեզվի և այլ հարցեր: Ազգային ինքնության պահպանման և օտար երկրում ինքնահաստատման համատեքստում սփյուռքի տարբեր գաղթօջախներում ու համայնքներում ձևավորվում էին տարբեր մոտեցումներ, սկզբունքներ ու աշխարհընկալում: Բնականաբար, նոր միջավայրում ձևավորվող բանաստեղծի աշխարհընկալման վրա մեծ ազդեցություն էր գործում տվյալ տարածաշրջանի մշակույթի յուրահատկությունն ու հայ մշակույթի հետ առնչությունների շրջանակը, հարազատությունը, ազդեցության ուժը կամ ընդհակառակը՝ հակազդեցությունը: Կարևոր էր նաև այն հանգամանքը, թե որքանով էր միջավայրը տրամադրող, նպաստավոր ազգային ինքնության, տեսակի, մշակույթի ու լեզվի պահպանման առումով կամ ընդհակառակը՝ որքանով էր այն խթանում ուծացմանը: Վերոհիշյալ հանգամանքով էլ պայմանավորված են սփյուռքի տարբեր գաղթօջախների մշակույթի, մասնավորապես գրականության յուրահատկություններն ու տարբերություններն այլ տարածաշրջաններից:

Այսպես՝ արվեստների կենտրոն Փարիզում հանգրվանած ավագ սերունդը, որը ստացավ «Փարիզի տղաք» անունը (Վազգեն Շուշանյան, Շահան Շահնուր, Նիկողոս Սարաֆյան, Հրաչ Զարդարյան, Միսաք Մանուշյան, Գեղամ Աթմաճյան, Բուզանդ Թոփալյան), կարծում էր, որ պետք է բոլորովին նոր ուղիներ ու արտահայտչաձևեր որոնել հայի նոր զգայություններն արտացոլելու համար: Նրանց համար գերխնդիր է դառնում ինքնաճանաչողությունը, սեփական ներաշխարհը թափանցելու ու նոր հորիզոններ պեղելու հեռանկարը: Այս հեղինակների վրա մեծ ազդեցություն են գործում սյուրռեալիստների և էքզիստենցիալիստների գեղագիտությունն ու փի-լիսոփայությունը:

«Արեւելքի տղաք» (Մուշեղ Իշխան, Անդրանիկ Ծառուկյան, Վահե Վահյան, Ժագ Հակոբյան, Սիրան Սեզան) անխոս ուխտով սկսեցին հոգևոր կամուրջ կառուցել 1915 թ. արհավիրքից առաջացած անդունդի վրա, կամուրջ, որի շնորհիվ պիտի շարունակվեր ու նոր ընթացք ստանար արևմտահայ գրականությունը: «Արեւելքի տղոց» գաղափարական, աշխարհայացքային հիմքը ազգային առողջ կենսափիլիսոփայությունն էր՝ հիմնված հավատի, ազգային ու համամարդկային բարձր արժեքների վրա:

Մուշեղ Իշխանի ստեղծագործական կյանքն սկսվեց հայրենիքի, հայրենի տան որոնումով: Կյանքի իմաստի, նպատակների ու խընդիրների հստակեցումը, ինքնաճանաչման ու ինքնահաստատման հետ կապված բազում բարդ ու հակասական հարցադրումները հնչեցին «մնացորդաց» ներսում գոյավիճակի հենց սկզբից, երբ նրանք արթնացան եղեռնի մղձավանջից: Ի՞նչ անել, ինչո՞ւ և հանուն ինչի՞ ապրել հարցադրումները Մերձավոր Արևելքում կարծես թե գրտան իրենց պատասխանները. Հայոց եղեռնից հետո Լիբանանի հայկական գաղթօջախը ինքնակազմակերպվեց և դարձավ մի առանձնահատուկ հոգևոր-մշակութային կենտրոն ողջ սփյուռքահայության համար: Մերձավոր Արևելքի հայկական գաղթօջախներն ընտրեցին տոհմիկ կաղապարի մեջ փակվելու ուղին: Մուշեղ Իշխանի

ապրած կյանքը, կրթությունն ու դաստիարակությունը ուղենշեցին և ուրվագծեցին նրա աշխարհայացքը: Մուշեղ Իշխանի գաղափարական ձևավորման և հասունացման գործում մեծ է նրա ուսուցիչների դերը: Բանաստեղծի ուսուցիչները եղել են հայ մշակույթի նվիրյալներ Լևոն Շանթը, Նիկոլ Աղբալյանը, Կոստան Զարյանը, Նիկողայոս Ադոնցը, Սիմոն Վրացյանը, Վահան Թեքեյանը: Հետագայում բանաստեղծն իր գունագեղ ու տպավորիչ վրձնով կեր- տում է ուսուցիչների դիմանկարները «Իմ ուսուցիչներս» գրքում (1984 թ.): Նրա մեծ ուսուցիչները և հատկապես Նիկոլ Աղբալյանը սովորեցնում էին հասնել հայ ոգուն, բացահայտել նրա առանձնա- հատկությունները, նրանք իրենց աշակերտների մեջ անընդհատ խորացնում էին այդ ոգին, սովորեցնում ըստ արժանվույն գնահատել ու ընկալել հայ մտքի ու ոգու առանձնահատուկ արժեքները: Հետագայում այդ արժեքները նոր ժամանակների և իրողությունների լույսի ներքո իր աշակերտներին էր փոխանցում նաև Մուշեղ Իշխանը:

Մուշեղը դարձավ իր սիրելի ուսուցչի՝ Լևոն Շանթի հումանիզմի արժանի շարունակողը. «Աշխատեցէք մա՛րդ ըլլալ. մարդը տիեզերքի բարձրագոյն արժեքն է»[2]:

Ինչպես Անդրանիկ Ծառուկյանն է բնորոշում իր սերնդակիցներին, այդ «մանկություն չունեցող մարդկանց» բաժին ընկավ չափազանց բարդ հոգեբանական արգելքներ հաղթահարելու, հայ ժողովրդի մարդասիրական, քրիստոնեական կենսափիլիսոփայությունը նոր կենսապայմաններում վերարժևորելու ճակատագիրը: Մ. Իշխանին հոգեհարազատ բանաստեղծ Վազգեն Շուշանյանը այդ սերը համարում է «մեծ ու կորստաբեր», թեև մարդկությունը թույն է խառնել իրենց արյունին, բայց հավատով ներշնչված զարմանալի մի լույս մաքրում է այս որբերի արյունը թույնից ու լցնում կենսաբեր ավիշով: Նրանց սնուցում էր հայ մշակույթի զարկերակը. որտեղ էլ ապրեին, ինչ գրական ուղղության, հոսանքի կամ փիլիսոփայության էլ դավանած լինեին, ներքին անբացատրելի ուխտով նրանք նայեցին մեկ ուղղությամբ ու ապրեցին մեկ սկզբունքով՝ իրենց համազգային ողբերգության վրեժը լուծել ապրելով ու արա- րելով:

Մուշեղ Իշխանը մտածում էր իր մեծ ուսուցչի՝ Լևոն Շանթի նման, որ լավատեսությունը կյանքը իմաստավորում է առատ հունձքով և պարտության է մատնում մահվանը: «Արևելքի տղոց» շարժմանը բնորոշ դարձավ իրենց կյանքով, անձնական օրինակով և բազմաբնույթ գործունեությամբ նոր սերունդներին կրթելու, դաստիարակելու, ոգեկոչելու միտումը: Իրենց առաքելության բարձր գիտակցությամբ նրանք ակտիվորեն հանդես էին գալիս գաղթաշխարհի տարբեր բնագավառներում: Այս սերնդի ներկայացուցիչներից յուրաքանչյուրը մանկավարժ էր, հրապարակախոս, քաղաքական գործիչ, գրող, խմբագիր: Այստեղից էլ բխումէ Մ. Իշխանի այն սկզբունքը, որ գրողի մարդկային նկարագիրն ու նրա ստեղծած

[2] **Մ. Իշխան,** *Իմ Ուսուցիչներս, Պեյրութ, 1984, էջ 106:*

գրականությունը ուղիղ համեմատական են: Ըստ նրա՝ որքան գրողը կատարելագործվում է որպես մարդ, այնքան նրա ստեղծած գրականությունը հաստատվում է որպես արժեք: Գրականությունը պետք է նպաստի, որ մարդը դառնա առավել կատարյալ, ներդաշնակ ու ամբողջական: Յուրաքանչյուր մարդ պետք է մտածի նախ իր սեփական անձը կատարելագործելու մասին՝ անվերջ ճանաչելու, սովորելու ճանապարհով. անհատը պետք է լինի ուժեղ ու սկզբունքային, որ հետագայում կարողանա օգտակար լինել իր ազգին:

Սփյուռքում ազգային գոյապայքարին՝ հայապահպանությանը զինվորագրված անհատը, ըստ Մուշեղ Իշխանի, պետք է զինված լինի փիլիսոփայական ու հասարակագիտական խոր գիտելիքներով, պետք է լինի փիլիսոփա-մտածող. «Զգայարանքները մոլորեցնող են յաճախ, երբ չեն անցնիր իմացականութեան բովեն»[3]: Նրա գրականությունը պետք է լինի ոչ միայն բնատուր տաղանդի դրսևորում, այլև «մշակուած մտքի մը եւ խորազգաց սրտի մը լուսարձակը»[4]:

Ըստ Մուշեղ Իշխանի՝ գրական ստեղծագործությունը հնարավոր չէ անջատել կյանքից և այն հասարակական երևույթներից, որոնց ներսում է ապրում ստեղծագործողը. յուրաքանչյուր գրող աշխարհ է գալիս և կայանում մի նվիրական առաքելությամբ: Մեծ ուսուցիչներից իրեն փոխանցված կյանքի ճշմարտությունը՝ «Կեանքը կռիւ է, մաքառում, ձգտում, բարձրացում»[5], դարձավ նրա աշխարհայացքի ելակետային սկզբունքներից: Նա ոգեղինացնում է մարդու պայքարը. այն հոգեկան կարողությունների հանրագումար է, որ դրսևորվում է աշխատանքի միջոցով: Լևոն Շանթի հնչեցրած ժողովրդական իմաստությունը՝ «Սուրբ է աշխատանքը: Աշխատողը միայն մարդ կդառնա», Իշխանն ընդունում և դարձնում է իր կենսակերպի հիմնաքարերից մեկը:

Նրա աշխարհայացքի ձևավորման վրա մեծ ազդեցություն է գործել Ինտրայի «Ներաշխարհը»: «Ներաշխարհում» դրսևորված կյանքի ու երազի, մահվան ու հավերժականի, սիրո ու աստվածայինի վերաբերյալ Ինտրայի ընկալումներն ու փիլիսոփայությունը կարծես նստվածք են տվել Մ. Իշխանի ենթագիտակցության մեջ և արտացոլվել նրա քնարերգությունում: Ինտրային բնութագրող Իշխանի տողերը ասես վերաբերում են նաև իրեն. «…Նոյն ատեն իր մեջ կը կրէր բանաստեղծի գերզգայուն հոգի եւ իմաստասէրի տագնապող միտք»[6]:

Հայոց սփյուռքի բազմաշերտ քաղաքական, սոցիալական ու հոգեբանական բարդ իրավիճակում իր ինքնաճանաչման ու ինքնահաստատման ուղին որոնող հայ բանաստեղծի ստեղծագործությունը օժտվեց խոհական տարերքով, որը աստիճանաբար պիտի զարգանար, զտվեր և, որպես Մերձավոր Արևելքի սփյուռքահայի և ընդհանրապես տարագիր հայի աշխարհընկալում, դրսևորվեր նրա հասուն շրջանի ժողովածուներում՝ «Տառապանք», «Ոսկի աշուն»,

---

[3] *Նույն տեղում, էջ 113:*

[4] *Նույն տեղում, էջ 123:*

[5] *Նույն տեղում, էջ 116:*

[6] **Մ. Իշխան,** *Արդի հայ գրականութիւն, Պեյրութ, էջ 153:*

«Արեւամար», «Իրիկնալոյս ռումբերու տակ»: Հավատի, լեզվի, ազգային ոգու ու նկարագրի պահպանման տեսանկյունից հայոց սփյուռքի պատմությունը վկայում է այդ աշխարհընկալման կենսունակությունն ու ուժը:

Դեռևս 1938 թ. լույս տեսած «Կրակ» ժողովածուում թանձրանում է բանաստեղծության խոհական ընդգրկումը, բանաստեղծական պատկերը հանգում է դատողության կամ հակառակը: Նոր արժեքների որոնման ճանապարհին բանաստեղծը հայտնվում է երազի և իրականության սահմանագծում, որտեղ երազը նույնքան իրական է, որքան իրականությունը՝ երազ: «Կեանք եւ երազ» շարքի բնաբանը՝ «Կեանքն իր երազ մը եղաւ, ինչպես երազն իրեն կեանք»[7], բնորոշում է նրա պոեզիայի ընդգրկումը. այն ասես բանաստեղծի ինքնահաստատման ու ներդաշնակության բանաձևն է, որն առընչվում է նաև Լևոն Շանթի ու նրա «Հին աստվածների» աշխարհընկալման հետ. «Բարոյական նկարագրի գեղեցկութիւնը եւ գրագէտի կոչումը իր մէջ միաձուլված ներդաշնակութիւն մըն էին դարձած. ահա թէ ինչու ան չբաժնեց արուեստը գաղափարէն, գեղեցիկը ճըշմարտէն, երազը իրականութենէն»[8],- գրում է Մ. Իշխանը իր ուսուցչի մասին: Կյանքի հանդեպ Մուշեղ Իշխանի իմաստասիրական մոտեցումը այն սոսկ քննելու, ճանաչելու մղում չէ, այլ ապրելու կերպ: Սփյուռքի հավատավոր բանաստեղծն ասես նոր սոկրատեսյան հայացք է ձգում կեցության ու գիտակցության, նյութի ու հոգու, երազի ու իրականության վրա և ստեղծում նոր ու յուրահատուկ բարոյագիտական ռացիոնալիզմ, որի հիմքում ինքնաճանաչողությունն է, նպատակը՝ սեփական առաքինությունները բարիքի վերածելու ուղին, որը տանում է դեպի բնականն ու անձի ազատությունը:

Աշխարհն ունի վեհ գագաթներ ձյունապատ
Եվ բարձունքներ ամպերուն մեջ կորսված,
Որոնց վրա միշտ ազատ՝
Կալանավոր չես հողին, դո՛ւն հողածին արարած[9]:

Ուսումնասիրելով Մ. Իշխանի ստեղծագործության իմաստասիրական հենքը՝ ակնհայտ է դառնում նրա մոտեցումը կեցության և գիտակցության, երազի ու կյանքի նույնականության վերաբերյալ, որոնք, սակայն, միասնություն են կազմում, և այդ միասնությունը գործունեություն է, շարժում:

Չփորձելով փիլիսոփայական ուղղություններ ու դպրոցներ վերաձևել կամ վերագրել սփյուռքահայ բանաստեղծին՝ այնուամենայնիվ, նրա կյանքի ու ստեղծագործության զուգահեռները, քնարերգության զարգացման դինամիկան ակնհայտ են դարձնում կուռ իմաստասիրական մի կառույց, որը պարզապես չափազանց ներդաշնակում է օբյեկտիվ իդեալիզմին: Հասկանալու համար Մուշեղ Իշխանի «Կեանքն իր երազ մը եղավ, ինչպէս երազն իրեն կեանք»

---

[7] **Մ. Իշխան,** *Իմ Ուսուցիչներս, 1984, էջ 106:*
[8] *Նույն տեղում, էջ 116:*
[9] **Մ. Իշխան,** *Երկեր, Ե., 1990, էջ 126:*

խաչաձև դատողությունը՝ պարզապես կարելի է դիմել Հեգելին. իր սեփական գոյությունը մտածողության առարկա դարձրած բանաստեղծի երկատումը օբյեկտիվի ու սուբյեկտիվի, կամ որ նույնն է այս դեպքում՝ երազի ու կյանքի, որոնք, ըստ էության, նույնական են, և այդ նույնականության բովանդակությունը բանաստեղծի մտածողությունն է: Բանաստեղծի մտածողության դիալեկտիկայի առաջին պարույրն ընդգրկում է «Տուներու երգը», «Երազ և կեանք» ժողովածուները և «Ողջույն քեզ կեանք» քնարական պոեմը»*, որտեղ բանաստեղծի գիտակցությունն աշխարհը ճանաչում է որպես իր էություն:

Կարծում ենք, որքան էլ Մուշեղ Իշխանը դեմ էր օտար վարդապետություններին տուրք տալու որոշ հայ գրողների հակումներին, նրա քնարերգությունը հիմնականում օժտված է խոհական տարերքով և, բնական է, որ պետք է առնչվի իմաստասիրական որոշ ուղղությունների ու դպրոցների հետ: Թեև հիմքում Մ. Իշխանի աշխարհայացքը խարսխված է հայ փիլիսոփայական մտքի ակունքներին, XX դ. քաղաքակրթությունը իր վայրիվերումներով նրա պոեզիային հաղորդել է նոր, անճանաչ լիցքեր: Բանաստեղծի մտածողությունը կարծես նվաճում է նոր տարածքներ, զուգորդվելով, երբեմն ներդաշնակելով այդ օտար վարդապետություններին, որոնցից մեկը թերևս էպիկուրյաններն են, քանի որ նրանց նման բանաստեղծը իրեն զգում է որպես բնության մասնիկ և գիտակցում իր տեղն այդ բնության մեջ:

Չէիր կրնար տալ ինձ շնորհ մ՝ ավելի մեծ,
Քան մարդացյալ կյանքի շնորհն այս անսահման[10]:

Մինաս Թեոլեոլյանը գրում է. ««Ողջույն քեզ կյանքը» poeme a these մըն է, որ կը ձգտի հոռետես ու նահանջական ամեն աշխարհայացք ժխտել ու փառավորել կենսասիրական վարդապետությունը, անշուշտ առանց մոտենալու եպիկուրյաններուն»[11]:

Պոեմը գրվել է ի հակադրություն Ավետիք Իսահակյանի «Աբու Լալա Մահարի» պոեմի և Շոպենհաուերի դեպի ճգնավորության և իռացիոնալիզմի, ինքնակործանումի մղող գաղափարախոսության: Իսահակյանի նիհիլիզմին հակադրվող Իշխանի կյանքի պաշտամունքն ու փառաբանությունն ասես մարմնավորում են Հայոց ցեղասպանության նահատակների ապրելու անպարագիծ տենչը: Սակայն Մ. Իշխանի փիլիսոփայությունն առավելապես առնչվում է Կիերկեգորի գոյության փիլիսոփայության և Բերգսոնի ինտուիտիվիզմին՝ պոեզիայում հաստատելով, որ անհատի կյանքն աշխարհի էությունն է, մեր հոգեկան վիճակների վերապրվող փոփոխություններն են:

Մուշեղ Իշխանի խոհական քնարերգության հաջորդ փուլն ընդգրկում է «Տառապանք», «Արեւամար» և «Իրիկնալոյս ռումբերու

---

* *Վազգեն Գաբրիելյանը Մ. Իշխանի երկերի «Ծանոթագրություններ» բաժնում «Ողջույն քեզ կյանքը» համարում է ժողովածու:*

[10] **Մ. Իշխան,** *Երկեր, էջ 163:*

[11] *Այգ, Բեյրութ, 7.V.1958,* **Թեոլեոլյան Մ.,** *Ողջույն քեզ կյանք, էջ 2, 3:*

տակ» ժողովածուները, թեև խոհական տարերքը բնորոշ է նրա գրեթե բոլոր ժողովածուներին: Եթե «Ողջույն քեզ կեանք» ժողովածուն գրվել է Լիբանանի գաղթօջախի ծաղկման շրջանում, ապա Արևելքից Արևմուտք ձգվող հայության նոր վերագաղթերը, քաղաքական անհաշտ մթնոլորտը, ուծացման վտանգը և բանաստեղծի հասուն, խորաթափանց միտքն ու մարդու, կյանքի ճանաչողության որոշակի պաշարը հիմք դարձան նրա խոհական քնարերգության հաջորդ փուլի համար: Ինչո՞ւ նրա լավագույն շարքերից մեկը կոչվեց «Տառապանք», ի՞նչ կապ ուներ Մուշեղի տառապանքը Շոպենհաուերի տառապանքի հետ, ինչո՞ւ այս ժողովածուի բնաբան ընտրվեց արաբ բանաստեղծ Աբու էլ Ալա էլ Մաարիի տողերը.

Մենք կը տառապինք,
Եւ ատիկա միակ բանն է
Զոր վստահ գիտենք[12]:

Սփյուռքի հավատավոր բանաստեղծը խոր կսկիծով ունկնդրում է կյանքի «եղերական համերգը», ու աշխարհի ցավով հիվանդ բանաստեղծի մեղեդին հնչում է համամարդկային վշտի ելևէջներով, հնչում է որպես նարեկյան ողբի նոր արտահայտություն: Սակայն անժխտելի է, որ այս ժողովածուում բանաստեղծը շրջադարձ է կատարում դեպի շոպենհաուերյան աշխարհընկալումը: «Ցաւիդ խորեն» բանաստեղծության մեջ մահը ամենազոր է, որ բուժում է ամեն վերք, փակում է ամեն պարտք, հարթում ամեն քեն.

Չկայ կեանքի անել ուղի մթամած,
Ո՛չ մէկ հանգոյց եւ ահաւոր առեղծուած,
Մահը կու գայ եւ կը լուծէ ամեն հարց[13]…

Ըստ գերմանացի փիլիսոփայի՝ կյանքն ի վերուստ տառապանք է, և նրա մասնավոր ձևից ազատվելը սոսկ պատահարներ կարող են լինել, տիեզերական չարիքն անխուսափելի է ու անհասկանալի:

Ցնորք է գուցէ մեր շուրջ ամէն բան,
Աչքերը մարդուն՝ խաբկանքի պաստառ,
Անցքերն աշխարհի լոկ շարժանկար,
Ցնորք է գուցէ մեր շուրջ ամէն բան,
Կսկիծն է կեանքին միայն իրական,
Տառապանքը խոր ու բազմախորհուրդ[14]…

Հատկանշական է, որ Մ. Իշխանի պոեզիայում այն հասկացությունները, որոնք դառնում են նրա ժողովածուների հիմքը, բազմիմաստ են, ինչպես տունը, երազը, կյանքը, մահը, տառապանքը և այլն: Այսպես՝ երազը նրա քերթվածների մայրն է, հեքիաթի հրաշագործ մատանին, Հայաստանը, անիրական կինը, իրեն արքա զգացող խենթը, քաղցր ու երանելի սուտը: Տունը մեկ պապենական օջախն է, որտեղ մնացել է

[12] **Մ. Իշխան,** *Տառապանք, Բեյրութ, 1968, էջ 3:*
[13] *Նույն տեղում, էջ 5:*
[14] *Նույն տեղում, էջ 5:*

իր օրորոցը («Տուներ տարագիր»), մեկ բանաստեղծի պայծառ տեսիլքն է ու մեծ երազը («Տան մը երազը»), մեկ տունն իր մայրն է («Իմ տուն, իմ մայր»), մեկ հեռվում անթաղ կմախք է իր օջախը («Ավերակ տունը»), մեկ լեռան կատարին կանգնած հպարտ տուն («Լերան տունը»), մեկ օտար քաղաքի օտար երկնաքեր («Հսկա շենքին մը դիմաց»), մեկ վաղվան տուն, որ պիտի վերակերտի բանաստեղծը «քերթվածի մը նման» («Վաղվան տունը»):

Մանկություն չունեցող որբերի սերունդը, որին անընդհատ հալածում էր մահվան ու կոտորածների ուրվականը, բնականաբար, պիտի փորձեր յուրովի բացահայտել կյանքի ու մահվան առեղծվածը: Յուրաքանչյուր տարագիր հայ մասնատված, աշխարհով մեկ ցիրուցան եղած ամբողջության մի մասնիկն է, որը գիտակցաբար թե ենթագիտակցաբար ձգտում է իր ամբողջությանը: Այսպես է նոր գոյավիճակը զգում բանաստեղծը՝ Մուշեղ Իշխանը.

Ինծի կը թուի՝ ես կամ ու չկամ
Հայոց Սփիւռքի տարածքին անծիր.
Մարմինես պոկուած ամեն մեկ անդամ
Աշխարհէ աշխարհ եղավ ցան ու ցիր…[15]

Մ. Իշխանի «Տառապանք» ժողովածուում կյանքի խոր ճանաչողությունից, հասուն ու որոշակի գաղափարական սկզբունքներից, բանաստեղծի առողջ ինտուիցիայից հասունանում են նրա փիլիսոփայական հայացքները: Ժողովածուն ասես Սողոմոն Իմաստունի «իմաստություն իմաստությանցը» հնչեցնում է նորովի, նոր մարդու, սփյուռքահայ բանաստեղծի ինքնատիպ հարցադրումներով:

Այսօր արդեն անհերքելի իրողություն է, որ հայոց սփյուռքը՝ իր ողջ պատմությամբ ու մշակույթով, հայ ժողովրդի գոյության կարևոր և անբաժանելի հատվածն է: Օրինաչափություններով ու յուրահատկություններով, ազգային տեսակի, մշակույթի կրած փոփոխություններով, զարգացման դինամիկայով ու հեռանկարներով այն դեռ խոր և բազմակողմանի ուսումնասիրության, վերլուծության կարիք ունի: Սփյուռքը հայ ազգագրության, ազգային գաղափարաբանության, մշակութաբանության, փիլիսոփայության և հոգեբանության բնագավառներում հավուր պատշաճի չպեղված ու չուսումնասիրված ոլորտ է: Աշխարհաքաղաքական իրողությունների նոր հորձանուտում, գլոբալացման ու համահարթեցման, նոր արժեհամակարգերի որդեգրման, հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման, ազգի միասնականության համատեքստում չափազանց արդիական անհրաժեշտություն է սփյուռքահայության բազմաշերտ ու բազմաբնույթ աշխարհընկալման, հոգեբանության մշակույթի՝ շերտ առ շերտ, հատված առ հատված հիմնավոր ու խոր վերլուծությունը, օրինաչափությունների ու ընդհանրությունների բացահայտումը: Այս տեսանկյունից Մուշեղ Իշխանի խոհական քնարերգության առավել հիմնավոր ուսումնասիրությունը, թերևս լույս կըսփռի սփյուռքի, մասնավորապես Մերձավոր Արևելքի գաղթօջախ-

[15] **Մ. Իշխան,** *Արեւամար, էջ 17:*

ների ճանաչողության և նրա ընկալման, զարգացման դինամիկայի վրա:

Լինելով սփյուռքահայության տագնապների, ցավերի արտահայտիչը, հայ ոգու ու լեզվի պահպանման գաղափարակիրը՝ Մուշեղ Իշխանը չի սահմանափակվում զուտ ազգային հետաքրքրություններով: Նրան հուզում է ողջ մարդկության ճակատագիրը.

Սիրտս կարիւնի աշխարհի ցավով,
Որքա՜ն տառապանք, Աստուած իմ, չորս դիս,
Կեանքի դաշտերէն փչող ամէն հով
Հառաչ ու կսկիծ կը զարնէ դէմքիս[16]:

Ո՞ւր է գնում մարդը՝ այդ «տարօրինակ արարածը»: Դեպի առաջընթա՞ց: Եվ մի՞թե գիտատեխնիկական տարաբնույթ նվաճումները փոխել են նրա էությունը: Բանաստեղծը տալիս է ժխտական պատասխան. «Դարերը կ'անցնին, գործիքներն ու մեքենաները կը փոխուին, իմաստութեան մատեանները կը բազմապատկուին, բայց մարդը իր խորքով նոյնը կը մնայ: Նոյն անողոք բռնակալը տկարներուն հանդէպ, նոյն եսամոլը, որ չի կշտանար նիւթական հարըստութիւններէն, նոյն գազանը՝ որ կրնայ իր ձեռքերը ներկել հազարաւոր անմեղ մանուկներու, կիներու և այրերու արիւնով[17]»:

Դարերի ընթացքում փոխվել են միայն վայրագությունների ձևերը: Ասես նյութն ու հոգին դուրս են եկել խելահեղ մրցարշավի, ու հաղթողը նյութն է.

Ես ի՞նչպէս նստիմ խնջոյքի սեղան,
Եւ ըմպեմ ուրախ վայելքի գինին,
Երբ որ կը խլեն մարդիկ անվարան
Որբի մը բերնէն պատառը հացին[18]:

Հիվանդ բանաստեղծը տառապում է աշխարհի ցավով, ելք է որոնում «համատարած խավարի մեջ».

Աստուա՜ծ իմ, որքան անարդար վճիռ.
-Ես ի՞նչպես կրնամ քար դնել խղճիս…
Կեանքեր թեւաբեկ եւ շղթայակիր.
-Աշխարհի ցաւով հիվա՜նդ է հոգիս[19]…

Մ. Իշխանի կարծիքով միայն իրավ մեծությունները, հանճարները կարող են ուժ ու զորություն տալ հոգուն, որ նա առաջ ընթանա և թույլ չտա՝ մարդկային նենգությունը, ագահությունն ու չարությունը քարշ տան երկիր մոլորակը դեպի կործանում. «Զանազան գոյնի վարդապետութիւններ բառերու հրթիռներ կը նետեն օդին մեջ, ապագայ երջանիկ աշխարհի կառուցման ծրագրով: Ապագան, տեսանք, ո՛չ փիլիսոփայություն է, ո՛չ աշխարհակալութիւն: Գալիք լաւ օրերը պիտի ծագին միայն ու միայն բոլոր ազգերու խաղաղ գործակցութենէ, եղբայրութեան ոգիով...[20]»:

---

[16] **Մ. Իշխան,** *Տառապանք, Անթիլիաս, 1968, էջ 8:*
[17] *Մարմարա, Պոլիս, 15. IX.1969, էջ 2:*
[18] **Մ. Իշխան,** *Տառապանք, 1968, էջ 8:*
[19] *Նույն տեղում, էջ 8:*
[20] *Մարմարա, Պոլիս, 4.XI.1968, էջ 2,* **Մ. Իշխան,** *«Եղբայրութեան կարոտով»:*

ФИЛОСОФСКАЯ ЛИРИКА МУШЕГА ИШХАНА

БАГДАСАРЯН Э. С.

Резюме

Философская основа творчества Мушега Ишхана – поэта, педагога, публициста и драматурга – базируется на тождестве бытия и сознания, мечты и жизни, которые составляют единое целое. Мушег Ишхан не ограничивается рамками национальных интересов. Его волнуют судьбы всего человечества, тайны человеческой души и бытия, которые находят своеобразное преломление особенно в сборниках “Страдание”, “Золотая осень”, “Закат”, “Сумерки под бомбами”.